Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԽՈՐՀՐԴ. ՄԻՈՒԹՅԱՆ
ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ԿՈՂՄԻՑ

ԱԵՄՊ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ինվ. № 11257-9

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ
ԵՎ ԿՈԼԽՈՋԿԵՆՏՐՈՆԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ
ԿՈԼԽՈՋՆԵՐՈՒՄ 1931 Թ.

ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱԺԽՄԱՆ ՄԱՍԻՆ

338.14
Խ-11

ԹԻՖԼԻՍ—1931

338.14
Ա-11

Ա. Ֆ. Մյասնիկյանի անվ. տպ., հր. „Զարյա Վոստոկա"-ի, Ռոստ. 33
Պատվեր 2023. Գլավլիտ 1456. Քանակ 3000.

17 FEB 2010
ЦЕНТР. ГОСБИБЛИОТЕКА ТССР
ИНВ. № 2
331.2:63

ԲԱԺԻՆ I

Ցեկամուտների և բերքի կանոնավոր բաշխումը կոլխոզներում ըստ կատարված աշխատանքի քանակի և վորակի և համաձայն կոլխոզնիկի աշխատաղբրքույկի մեջ գրված աշխատորերի քանակի, վճռական նշանակություն ունի կոլխոզների արտադրական ամրացման, ամեն մի կոլխոզնիկի նյութական շահագրգռվածությունը աշխատանքի մեջ մեծացնելու, կոլխոզնիկների աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և կոլխոզային շարժման հետագա աճի համար։

Կոլխոզնիկների հիմնական մասսայի փորձի աճի համեմատ ներկա տարում բոլոր ռայոններում և բոլոր կոլխոզներում պետք է անպայման վերացվեն անցյալ տարի յեկամուտների բաշխման գործում յեղած թերությունները։ Այդ թերությունները արտահայտվեցին հետևյալ ձևով.

1. Ցեկամուտները բաշխվում եյին ըստ շնչերի և վոչ թե ըստ կատարած աշխատանքի քանակի ու վորակի։

2. Կուլակի ագիտացիայի ազդեցության տակ առաջին կալի հացը բաշխվել է կոլխոզնիկների մեջ առաջուց միանգամից մի ամբողջ տարով, դա կազմալուծում եր աշխատանքային կարգապահությունը և 1930 թ. բերքահավաքի ժամանակ յեղած մեծ կորուստների ամենագլխավոր պատճառներից մեկը յեղավ։

30533

11 SEP 2013

3· Բացակայել է կոլխոզնիկներին տրվող դրամական և նատուրալ կանխավճարների ճիշտ կազմակերպումը, ինչպես նաև հսկողությունը նրանց վրա:

4· Խառնիխուռն է եղել կոլխոզի յեկամուտների հաշվառքը և բացակայել է կոլխոզնիկների կատարած աշխատանքի ճիշտ հաշվառքը:

5· Կոլխոզների և մյուս կազմակերպությունների միջև խառնաչփոթ դրության մեջ են եղել հաշիվները:

6· Կոլխոզնիկ մասսաները միանգամայն անբավարար մասնակցություն են ունեցել յեկամուտների դրամական և նատուրալ մասի բաշխման կարգի քննության գործում և յեկամուտների բաշխումը ձգձգվել է:

7· Հողային և կոլխոզային մարմինների կողմից միանգամայն անբավարար ղեկավարություն է եղել յեկամուտների բաշխման պրակտիկայի վերաբերմամբ:

Անցյալ տարի յեկամուտները բաշխելու ժամանակ թույլ տրված սխալներից խուսափելու համար Խորհրդային Միության Հողժողկոմատը և Կոլխոզկենտրոնը պարտավորեցնում են հողային և կոլխոզային մարմիններին՝ անցկացնել հետևյալ միջոցառումները·

ԲԱԺԻՆ II

1· Յեկամուտները լավ բաշխել անկարելի է առանց կոլխոզնիկների կատարած աշխատանքի և դրամով ու նատուրայով նրանց ստացած կանխավճարների ճիշտ հաշվառքի: Ուստի ամեն մի կոլխոզ պարտավոր է մինչև բերքահավաքի սկիզբը բոլորովին պարզել դրանցումները կոլխոզնիկի աշխատադրքույկում, նրա արտադրած աշխատորերի քանակը,

ՊԵՏԿԱՄ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ ... ՊՄ ՍՍՌ
Ս. ... им. А. Мас...

Ч3238-63

ինչպես և այդ աշխատորերի հաշվին դրամով և նատուրայով տրված կանխավճարները և հետագայում վոչ մի դեպքում թույլ չտալ աշխատորերի ուշ դրանցումները կոլխոզիկի դրքույկում, կատարելով այդ դրանցումները վոչ սակավ, քան հինգ որը մի անգամ:

2· Կոլխոզների վարչությունները պարտավոր են առանձին - մանրամասնությամբ կազմակերպել հավաքված ամբողջ բերքի հաշվառքը, վոչ մի դեպքում չթափել և չդարսել մթերքները առանց համապատասխան դրանցումների, վորի համար պետք է ունենալ անհրաժեշտ քանակությամբ կշեռքներ, իսկ կշեռքներ չլինելու դեպքում կազմակերպել չափելու ամենահասարակ ձևը չափերով, արկղներով, տոպրակներով և այլն:

3· Կոլխոզների վերստուգիչ հանձնաժողովները պարտավոր են վոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ ստուգել մթերքների և նյութերի հաշվառքի ճշտությունը և այն հանգամանքը, թե ստացվող յեկամուտները և ծախսերը, արդյոք, ժամանակի՞ն են կատարվում, աշխատորերի դրանցումը կոլխոզնիկների աշխատադրքույկներում, արդյոք, ժամանակին և ճի՞շտ են կատարվում, թե՞ չե:

Հարավային ռայոններում ոգոստոսի մեկից վոչ ուշ և մնացած ռայոններում ոգոստոսի 15-ից վոչ ուշ ամեն մի կոլխոզում վերստուգիչ հանձնաժողովը պիտի գեկուցի կոլխոզնիկների ընդհանուր ժողովին (կամ լիազորների ժողովին) կոլխոզնիկների հաշվեդրքույկների մեջ աշխատորերի դրանցման արդյունքների մասին:

ԲԱԺԻՆ III

Կոլխոզում ընդհանուր յեկամուտից կոլխոզնիկների միջև պետք է բաժանել·

ա) Պարենային հացահատիկը և մյուս մթերքները, բացի կոնտրակտացիայի համաձայն հանձնման (վաճառման) յենթակա մթերքներից և բացառությամբ սերմացուի, ապահովագրական և հատուկ պարենավորման ֆոնդերի, որոնք կազմվում են կոլխոզնիկների որոշմամբ:

բ) Բաժանել կերը, բացի պետությանը հանձնելու (վաճառելու) յենթակա կերից և պահվող կերային ֆոնդերից, որոնք պահվում են կոլխոզների ապրանքային ֆերմաների և համայնացված անասունների ու ապահովագրական կերային ֆոնդերի համար:

գ) Բաժանել դրամական միջոցները, բացի պարտքերի և հարկերի համար յենթակա վճարումից, ինչպես նաև կապիտալ շինարարության պլանն ապահովելու, ինվենտար, նյութեր գնելու և տնտեսության ուրիշ ծախսերը կատարելու համար հատկացվող միջոցներից և հասարակական հատուկ ֆոնդերի համար կատարվող հատկացումներից:

2· Այն կոլխոզներում, որտեղ աշնան ցանքերը դեռ չեն համայնացվել, ընդհանուր ժողովի որոշմամբ նրանք պետք է համայնացվեն և մտցվեն կոլխոզի ընդհանուր յեկամուտի մեջ: Աշնան ցանքերի բերքահավաքը կատարվում է կոլլեկտիվ կերպով:

Կոլխոզնիկների ընդհանուր ժողովը քննում և սահմանում է այն կարգը և պայմանները, որոնց համաձայն համայնացվում են աշնան ցանքերը:

3· Կոլխոզնիկների բոլոր աշխատաորերը, որոնք արտադրվել են 1931 թ· հունվարի մեկից մինչև 1932 թ· հունվարի մեկը, այդ թվում նաև աշնան ցանքը, աշնան վարը, բազմամյա բույսերը (խոտեր, այգիներ և այլն) և կապիտալ շինարարությունը,

պետք է հաշվի առնվեն 1931 թ· յեկամուտը բաշխելիս:

ԲԱԺԻՆ IV

Ընդհանուր յեկամտի պարենային մասը բաժանվում է այսպես·

1· Կատարվում է պետությանը հասանելիք արտադրանքի հանձնման (վաճառման) կոնտրակտացիայի պայմանագիրը:

2· Կազմվում է սերմացուի ֆոնդ այնպիսի ծավալով, որն ապահովելու յե 1932 թվի ցանքային տարածության ընդարձակումը վոչ պակաս, քան 10–20 տոկոսով, կոլխոզի 1932 թ· ցանքերի ընդարձակման պլանի համեմատ և սերմացուի ապահովագրական ֆոնդ 10–15 տոկոսի չափով:

3· Ստեղծվում է հատուկ պարենավորման ֆոնդ·

ա) Կոլխոզնիկների այն ընտանիքներին մատակարարելու համար, որոնք սակավ թվով աշխատունակ անդամներ ունեն և չնայած իրենց բարեխիղճ աշխատանքին, չեն արտադրել աշխատաորերի այն քանակությունը, որն անհրաժեշտ է ընտանիքը պարենով ապահովելու համար:

բ) Ուսուցիչներին, ագրոնոմներին, զոո-տեխնիկներին, անասնաբուժներին մատակարարելու համար, որոնք ապասարկում են կոլխոզը:

գ) Դրսում աշխատողներին և նրանց ընտանիքները ապահովելու համար, որոնք չեն կարողանում ստանալ իրենց անհրաժեշտ պարենային հացի անհրաժեշտ քանակությունը և անասունի կերը՝ ընտանիքում աշխատունակների անբավարար թվի հետևանքով, այն հաշվով, որ դրսում աշխատողները և նրանց ընտանիքները պարեն և կեր ստանան նույնքան,

վորքան ստանում է կոլխոզում բարեխիղճ կերպով աշխատող կոլխոզնիկը։ Եթե դրսում աշխատողի ընտանիքի աշխատունակ անդամները հրաժարվում են կոլխոզում աշխատելուց, այն ժամանակ դրսում աշխատողի ընտանիքը այդ արտոնությունից չի ոգտվում։

Ծանոթություն։— 3-րդ կետում հիշված պարենային ֆոնդից կոլխոզները բաց են թողնում վորոշված պետական դներով։

4. Պարենամթերքների ամբողջ հիմնական դանդվածը հանելով կոնտրակտացիայով հանձնված (վաճառած), սերմացուի համար պահած, ապահովագրական և հատուկ պարենային ֆոնդերը, բաշխվում է կոլխոզնիկների միջև աշխատանքի քանակի ու վորակի համաձայն, արտադրված աշխատաորերով, վորոնք գրված են կոլխոզնիկի աշխատադրքույկում։

Ծանոթություն։— 1. Կալի ընթացքի և կոլխոզի կողմից իր վրա վերցրած կոնտրակտացիայի պարտավորությունները կատարելու համեմատ, կոլխոզնիկներին տրվում են կանխավճարներ պարենամթերքներով՝ նրանց հասանելիք արտադրանքի բաժնի հաշվին՝ արտադրած աշխատաորերի համեմատ։ Կանխավճարները տրվում են կոլխոզի սահմանած չափով։

Ծանոթություն։— 2. Յուրաքանչյուր կոլխոզում, նայած կոլխոզնիկների միջև բաշխվելիք պարենամթերքների քանակությանը, սահմանվում է պարենահացահատիկի բարձրագույն չափ, վոր ստանում է այն կոլխոզնիկը, վորն արտադրել է ամենից շատ աշխատաորեր, և այդ սահմանված չափից ավելի հասանելիք յեկամուտը կոլխոզնիկն ստանում է դրամով։ Ավելի պակաս թվով աշխատաորեր արտադրած կոլխոզնիկը լավագույն կոլխոզնիկի համեմատությամբ ստանում է ավելի պակաս հացահատիկ։

ԲԱԺԻՆ V

Կոլխոզի կերի արտադրանքը բաժանվում է այսպես.

ա) Կատարվում է պետությանը հանձնվելիք (ծախվելիք) ամբողջ կերի պլանը կոնտրակտացիայի պայմանագրով նախատեսված չափով։

բ) Կազմվում է կոպիտ և կենտրոնացրած կերի ֆոնդ ապրանքային կոլխոզային ֆերմաների և կոլխոզի համայնացրած աշխատող մթերային անասունների կարիքը լրիվ ապահովելու համար և պահեստի կերի ֆոնդ՝ անասնաբուծության նախագծվող ընդարձակման համար։

Համայնացրած անասունների համար նշանակված ֆոնդից հատկացվելու յե անձեռնմխելի մասը աշխատող անասունի համար՝ զարնանացանի նախապատրաստման և անցկացման ժամանակ։

Կոլխոզային, ապրանքային ֆերմաների համար հատկացվող կերը պահվում է ապրանքային ֆերմաների համար և կարող են ծախսվել միմիայն ապրանքային ֆերմաների կարիքների համար։

գ) Ամբողջ կերը, վոր մնում է կոնտրակտացիայի պայմանագիրը կատարելուց և կերի ու պահեստի ֆոնդեր ստեղծելուց հետո, բաժանվում է կոլխոզնիկների միջև, վորոնք մթերատու անասուն ունեն ըստ կոլխոզնիկի արտադրած աշխատաորերի, հաշվի առնելով նրա մոտ յեղած մթերատու անասունը։

Ծանոթություն.— Մթերատու անասուն չունեցող կոլխոզնիկները յեկամտի իրենց հասանելիք մասը կերի փոխարեն ստանում են դրամով:

դ) Այն կոլխոզնիկը, վորը բերքը բաժանելուց հետո ձեռք կբերի մթերատու անասուն, կարող է ստանալ անհրաժեշտ քանակությամբ կեր՝ կերի պահեստի ֆոնդից՝ նրա արտադրած աշխատանքների քանակության համեմատ:

ԲԱԺԻՆ VI

Կոլխոզների դրամական յեկամուտներից հարկերը, ապահովագրությունը և վարկերի պարտքերը (վորոնք պետք է վճարվեն 1931 թ.) հանելուց հետո կոլխոզը հատկացնում է.

1. Անբաժան ֆոնդի համար հին կոլխոզներում 15 տոկոս և 1930 թ. հոկտեմբերից հետո կազմակերպված կոլխոզներում տասը տոկոս, վորը նշանակում է մեքենաներ գնելու, աշխատող և մթերատու անասուն գնելու և կապիտալ շինարարության համար:

Անբաժան ֆոնդը կազմակերպվում է դրամով (ռուբլիներով):

2. Յերկու տոկոս կոլխոզնիկների կողմից համայնացրած գույքի, գլխավորապես նրանց համայնացրած մթերատու անասունների արժեքի համաձայն բաշխելու համար:

3. Մեկ և կես տոկոս պրեմիալ ֆոնդի համար, լավագույն կոլխոզնիկներին, հարվածայիններին և բրիգադներին պարգևատրելու համար:

4. Մեկ և կես տոկոս զանազան դասընթացքներ ուղարկվող կոլխոզնիկներին ուղևելու համար:

Ծանոթություն.— Այն ռայոններում, վորտեղ դեռ համատարած կոլեկտիվացում չկա, 2, 3 և 4 կետերում հիշված ֆոնդը բաժանվում է համայնացրած գույքի համաձայն: Այդ ֆոնդի չափը վորոշվում է յեկամտի 5 տոկոսը:

5. 5 տոկոս կուլտ-կենցաղային ֆոնդին:

6. Դրամական գումարների ամբողջ հիմնական զանգվածը, բացի այն գումարներից, վորոնք հատկացվում են վերոհիշյալ ֆոնդերին, ինչպես նաև բացի արտադրական ծախսերի վճարումից, բաժանվում է կոլխոզնիկների միջև համաձայն աշխատանքների քանակության, վոր արտադրել է ամեն մի կոլխոզնիկ և վորը գրված է նրա աշխատանքագրքույկում:

ԲԱԺԻՆ VII

Յեկամուտների բաժանման կարգը և ժամկետները վորոշում է կոլխոզի վարչությունը և հաստատում է կոլխոզնիկների ընդհանուր ժողովը, ղեկավարվելով հետևյալ կանոնով.

1. Կոլխոզների վարչությունները պարտավոր են կոլխոզնիկներին հասանելիք 1931 թվի բաժինը բաժանել վոչ ուշ, քան մինչև 1932 թվի հունվարի 15-ը:

2. Կոլխոզնիկների կարիքները բավարարելու համար այսուհետև կոլխոզում մինչև յեկամուտների վերջնական բաժանումը, կոլխոզի վարչության վորոշմամբ, կոլխոզնիկներին կարելի յե տալ դրամական և նատուրալ կանխավճարներ, բացառապես կոլխոզնիկների արտադրած աշխատանքների հաշվին. կանխավճարներ կարող են տրվել այն կոլխոզնիկներին, վորոնք կատարում են կոլխոզների վարչությունների աշխատանքային առաջադրությունները:

3. Կոլխոզնիկների հետ վերջնական հաշիվ կազմելիս նրանց հասանելիք յեկամտի ընդհանուր դրամարից պետք է պահել այն բոլոր նատուրալ և դրամական կանխավճարները, որ տրվել են կոլխոզնիկներին տարվա ընթացքում:

4. Կոլխոզների վարչություններին իրավունք և տրվում նատուրալ և դրամական կանխավճարներից զրկելու այն կոլխոզնիկներին, որոնք վատ են աշխատում բերքահավաք, աշնանացանի աշնանավարի ժամանակ, և այդպիսի կոլխոզնիկներին կանխավճարներ տալ վերջին հերթին:

5. Պարտավորեցնել կոլխոզների վարչություններին՝ հարավային ռայոններում մինչև 1931 թ. հոկտեմբերի մեկը և մյուս ռայոններում մինչև նոյեմբերի մեկը մոտավորապես որոշել կոլխոզնիկների մեջ բաժանվող յեկամուտների չափը և կոլխոզնիկների արտադրած աշխատաորերի քանակի համեմատ տալ նրանց յեկամտի նրանց ամբողջ բաժնի մոտ յերկու յերրորդը, իսկ մնացած մեկ յերրորդը պետք է տրվի վերջնական հաշվի ժամանակ 1932 թվի հունվարի 15-ից վոչ ուշ:

* * *

Խորհրդային Միության Հողժողկոմատը և Կոլխոզկենտրոնը պարտավորեցնում են կոլխոզների վարչություններին, ռայոնական հողային մարմիններին և ռայկոլխոզմիություններին՝ կազմակերպել ներկա վորոշման լայն քննություն, վորպեսզի ամեն մի կոլխոզնիկ իմանա յեկամտների բաշխման կարգը մինչև ոդոստոսի մեկը: Պարտավորեցնել դաշնակից հանրապետությունների հողժողկոմատներին, կոլխոզկենտրոններին, մարզային-յերկրային հողվարչություններին և մարզային-յերկրային կոլխոզմիություններին՝

կազմակերպել ներկա վորոշման անշեղ կատարման մասսայական ստուգումը:

Այս տարի կոլխոզներից վոչ մեկում չպետք է թույլ տրվի թե՛ դրամական և թե նատուրալ յեկամուտների բաշխումը ըստ շնչերի:

ԽՍՀՄ Հողժողկոմատը և Կոլխոզկենտրոնի վարչությունը հիշեցնում են բոլոր կոլխոզնիկներին խորհրդների վեցերորդ համագումարի պարտադիր վորոշումը, վորտեղ ասված է.

«Յեկամտների բաշխումը (թե՛ դրամական և թե նատուրալ) վոչ ըստ կոլխոզնիկների կատարած աշխատանքի քանակի ու վորակի, այլ ըստ շնչերի՝ շատ հաճախ քարոզում են կուլակները և կոլխոզների մյուս թշնամիները, որոնք աշխատում են վիժեցնել կոլխոզային գործը: Ուրիշի աշխատանքի հաշվին այդպես ապրել սիրողներին անհրաժեշտ է ցույց տալ ամենավճռական դիմադրություն, մինչև իսկ հեռացներով կոլխոզներից: Կոլխոզային յեկամուտների բաշխումը այս սկզբունքով, թե ով ավելի և լավ է աշխատում, նա ավելի յել ստանում է, ով չի աշխատում, նա վոչինչ չի ստանում,—որենք է դառնալու բոլոր կոլխոզնիկների և կոլխոզների համար»:

ԽՍՀ Միության Հողժողկոմ՝ ՅԱ. ՅԱԿՈՎԼԵՎ

Կոլխոզկենտրոնի վարչության նախագահ՝ Տ. ՅՈՒՐԿԻՆ

1931 թ. 12 հուլիսի

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ ԳԱ ԳԻՐ
Ա. Մեսրոպի անվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0217079

30.533

495